# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, 093551057, yeghegnavan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 19

### ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Հաստատել ավագանու նիստի հետևյալ օրակարգը՝

1. Համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատարածքները աճուրդ-վաճառքով օտարելու մասին:

/Զեկուցող՝ Հ. Ղազարյան/

2. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնքի ավագանու կողմից ուղերձ ընդունելու մասին.

/Զեկուցող՝ Հ. Ղազարյան/

3. Համայնքի բյուջեի II եռամսյակի բյուջեի կատարման հաղորդումը հաստատելու մասին.

/Զեկուցող՝ Հ. Ղազարյան/

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԴԵԼԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՋԻՎԱՆ

ԿԱԳՐԱՄԱՆՅԱՆ ԺԱՆՆԱ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՎՍԵՓ ՂԱԶԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, 093551057, yeghegnavan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 20-Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ.

Թույլատրել աճուրդային կարգով օտարել համայնքի սեփականություն հանդիսացող հետևյալ հողատեսքերը՝

1. ծածկագիր 03-041-0115-0016, 0,7591հա. գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք:
Օտարվող հողատեսքի մեկնարկային գինը սահմանել կադաստրային արժեքի 100 %-ի չափով:
2. ծածկագիր 03-041-0010-0001, 0,92395 հա. բնակավայրի այլ հողատեսք:
Օտարվող հողատեսքի մեկնարկային գինը սահմանել կադաստրային արժեքի 50 %-ի չափով:
3. ծածկագիր 03-041-0010-0002, 0,51765 հա. բնակավայրի այլ հողատեսք:
Օտարվող հողատեսքի մեկնարկային գինը սահմանել կադաստրային արժեքի 50 %-ի չափով:
4. ծածկագիր 03-041-0011-0001, 0,21807 հա. բնակավայրի այլ հողատեսք:
Օտարվող հողատեսքի մեկնարկային գինը սահմանել կադաստրային արժեքի 50 %-ի չափով:
5. ծածկագիր 03-041-0119-0004, 0,60118 հա. գյուղատնտեսական նշանակության վարելահող:
Օտարվող հողատեսքի մեկնարկային գինը սահմանել կադաստրային արժեքի 30 %-ի չափով:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԴԵԼԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԺԻՎԱՆ

ԿԱԳՐԱՄԱՆՅԱՆ ԺԱՆՆԱ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՎՍԵՓ ՂԱԶԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, 093551057, yeghegnavan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 21-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ՈՒՂԵՐՁ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով համայնքների միավորման գործընթացը այլ համայնքների հետ Արարատի մարզի Եղեգնավան համայնքի միավորման նպատակահարմարության հարցը, արտահայտելով համայնքի բնակչության դիրքորոշումը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 11-րդ մասի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ.

1. Ընդունել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնքի բնակչությանը ուղղված ուղերձը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Ընդունել Հայաստանի Հանրապետության կառավարությանն ուղղված ուղերձը՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԴԵԼԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԺԻՎԱՆ

ԿԱՐԱՄԱՆՅԱՆ ԺԱՆՆԱ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՎՍԵՓ ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 1

Եղեգնավան համայնքի ավագանու
«02» օգոստոսի 2019 թվականի
N 21-Ն որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ

## ՈՒՂԵՐՁ

Եղեգնավան համայնքի հարգելի բնակիչներ,

Եղեգնավան համայնքի ավագանին քննարկելով համայնքների միավորման գործընթացը, հաշվի առնելով Եղեգնավան համայնքի բնակչության շրջանում տիրող գերակա տրամադրությունը այլ համայնքների հետ Եղեգնավան համայնքի միավորման գործընթացի նկատմամբ, հաշվի առնելով, որ այլ համայնքների հետ միավորումը չի տալիս ֆինանսական լրացուցիչ հնարավորություններ կամ նոր լիազորություններ, ավելի արդյունավետ համարելով ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված միջհամայնքային համագործակցության հնարավորությունները.

Եղեգնավան համայնքի ավագանին արտահայտելով իր կանխորոշիչ դիրքորոշումը, հայտարարում է, որ նպատակահարմար չի համարում համայնքի միավորումը որևէ այլ համայնքի հետ:

Որպես Եղեգնավան համայնքի ներկայացուցչական մարմին, համայնքի ավագանին, վստահեցնում է, որ կիսելով համայնքների միավորման գործընթացի նկատմամբ ձեր կարծիքն ու դիրքորոշումը, ղեկավարվելու է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասություններով:

Համայնքի ավագանին ակնկալում է, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը և ՀՀ Ազգային ժողովը կլսի համայնքի կարծիքը համայնքների միավորման գործընթացի մասով, կապահովի Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի 5-րդ հոդվածով և ՀՀ Սահմանադրության 190-րդ հոդվածով սահմանված համայնքների լսված լինելու իրավունքի իրացումը՝ գործընթացը շարունակելու դեպքում պարտադիր անցկացնելով տեղական հանրաքվե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՂԱԶԱՐՅԱՆ

Կ.Տ.

Հավելված N 2

Եղեգնավան համայնքի ավագանու
«02» օգոստոսի 2019 թվականի
N 21-Ն որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ
## ՈՒՂԵՐՁ

Արարատի մարզի Եղեգնավան համայնքի ավագանին, որպես ներկայացուցչական մարմին, քննության առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նախաձեռնված համայնքների միավորման գործընթացը, հաշվի առնելով այդ գործընթացի նկատմամբ համայնքի բնակչության ունեցած բացասական կարծիքը, նպատակահարմար չի գտնում Արարատի մարզի Եղեգնավան համայնքի միավորումն այլ համայնքի կամ համայնքների հետ։

Համայնքի ավագանին ակնկալում է, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը և ՀՀ Ազգային ժողովը կլսի համայնքի կարծիքը համայնքների միավորման գործընթացի մասով, կապահովի Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի 5-րդ հոդվածով և ՀՀ Սահմանադրության 190-րդ հոդվածով սահմանված համայնքների լսված լինելու իրավունքի իրացումը՝ գործընթացը շարունակելու դեպքում պարտադիր անցկացնելով տեղական հանրաքվե։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՂԱԶԱՐՅԱՆ

Կ.Տ.

# Հիմնավորում

Համայնքների միավորման գործընթացում Եղեգնավան, համայնքի ավագանու դիրքորոշումն արտահայտող համայնքի բնակչության ու ՀՀ կառավարության ուղված ուղերձների ընդունումը բխում է համայնքի ավագանու կարգավիճակից, համայնքների միավորմանը Եղեգնավան համայնքի ավագանու դիրքորոշումն արտահայտելու անհրաժեշտությունից՝ ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 11-րդ մասի պահանջներով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՂԱԶԱՐՅԱՆ

Կ.Տ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Համայնքի բյուջեում ծախսերի և եկամուտների վրա ազդեցության մասին

Սույն որոշման նախագիծը համայնքի  բյուջեում ծախսերի և եկամուտների փոփոխություն չի առաջացնում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՂԱԶԱՐՅԱՆ

Կ.Տ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնք
22, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, 093551057, yeghegnavan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 22-Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ-Ի II ԵՌԱՄՍԿԱՅԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետ ության օրենքի 38-րդ հոդվածի 1.1 կետով, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել համայնքի 2019 թ-ի II եռամսյակի բյուջեի կատարման հաղորդումը համաձայն թիվ 1 և 2 հավելվածների /կցվում է 2 էջ/:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԴԵԼԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԶԻՎԱՆ

ԿԱԳՐԱՄԱՆՅԱՆ ԺԱՆՆԱ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՎՍԵՓ ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված 1
ՀՀ Արարատի մարզի Եղեգնավան համայնքի ավագանու
**02.08.2019 թ. N 22-Ա** որոշման

**2019 թ.** Երկրորդ եռամսյակի եկամուտների կատարողականը աճողական տեսքով

| Եկամտատեսակ | Տարվա ճշտված պլան (հազ.դրամ) | Ամսվա պլանը աճողական տեսքով (հազ.դրամ) | Ամսվա կատարողականը աճողական տեսքով (հազ.դրամ) | Փաստացին պլանի նկատմամբ |
|---|---|---|---|---|
| ԸՆԴԱՄԵՆԸ | 61143.50 | 30304.80 | 22972.10 | 75.80% |
| ՀՈՂԻ ՀԱՐԿ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑԻՑ | 9130.00 | 4560.00 | 2018.70 | 44.27% |
| ՀՈՂԻ ՀԱՐԿ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑԻՑ | 63.40 | 30.00 | 0.00 | 0.00% |
| ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻՑ | 2900.00 | 1446.00 | 1101.00 | 76.14% |
| ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹ. ՖԻԶ ԱՆՁԱՆՑԻՑ | 100.00 | 48.00 | 0.14 | 0.29% |
| ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ/ԿԱՄ ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏ. ՀԱՄԱՐ | 208.00 | 102.00 | 156.00 | 152.94% |
| ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ | 0.00 | 0.00 | 19.50 | 0.00% |
| ՊԵՏ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՄԱՀԱՐԹ ԱԿԶԲՈՒՆՔՈՎ ՏՐՎՈՂ ԴՈՏԱՑԻԱՆԵՐ | 31440.00 | 15720.00 | 15720.00 | 100.00% |
| ՊԵՏ ԲՅՈՒՋԵԻՑ ՏՐԱՄԱԴՐՎ ԱՅԼ ԴՈՏԱՑԻԱՆԵՐ | 2.10 | 0.80 | 1.10 | 137.50% |
| ՀԱՄ. ՍԵՓ. ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ | 4000.00 | 1998.00 | 715.45 | 35.81% |
| ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ | 1500.00 | 750.00 | 738.11 | 98.42% |
| ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 0.00 | 0.00 | 66.00 | 0.00 % |
| ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՎՃԱՐ | 4500.00 | 2250.00 | 2029.20 | 90.19% |
| ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | 6300.00 | 3150.00 | 0.00 | 0.00% |
| ՀԱՄԱՅՆՔ ԵՆԹ ՄԱՆԿ ԳԱՆՁ ԾՆՈՂ ՎՃԱՐ | 1000.00 | 250.00 | 406.90 | 162.76% |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 61143.50 | 30304.80 | 22972.10 | 75.80% |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ԵՂԻԳԱՐՈՎԱ

Հավելված 2
ՀՀ Արարատի մարզի Եղեգնավան համայնքի ավագանու
**02.08.2019 թ. N 22-Ա** որոշման

# 2019թ. Երկրորդ եռամսյակի ծախսերի կատարողականը աճողական տեսքով

| Ծախսատեսակ / Հիմնարկ | Տարվա պլան (հազ.դրամ) | Ամսվա պլան (հազ.դրամ) | Փաստացի ծախսը (հազ.դրամ) | Ծախսը պլանի նկատմամբ |
|---|---|---|---|---|
| ԸՆԴԱՄԵՆԸ ՝ | 69896.098 | 50104.398 | 16799.510 | 33.53% |
| Աղբահանություն | 1400.00 | 750.00 | 598.891 | 79.85% |
| Բարձրագույն կրթություն | 200.00 | 100.00 | 0.00 | 0.00% |
| Գույքի նկատմամբ իրավունք | 200.00 | 100.00 | 0.00 | 0.00% |
| Կառավարման մարմ պահպանում | 18700.90 | 9232.80 | 6765.47 | 73.28% |
| Հանգիստ,մշակույթ,կրոն | 4950.00 | 2641.00 | 2242.695 | 84.92% |
| Հասարակական կազմակերպություն | 100.00 | 50.00 | 22.00 | 44.00% |
| Նախադպրոցական կրթություն | 9304.60 | 6000.00 | 2082.00 | 34.70% |
| Նախադպրոց հաստատ հիմնանորոգում | 480.00 | 480.00 | 460.00 | 95.83% |
| Ջրային կառույց շահագ. և պահպանում | 3460.00 | 2230.00 | 1752.933 | 78.61% |
| Սոց.պաշտպան.անապահով ընտանիքներին | 1900.00 | 1000.00 | 555.00 | 55.50% |
| Վարչ.բյուջեի պահուստային ֆոնդ | 8538.00 | 8538.00 | 0.00 | 0.00% |
| Արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգում | 3680.00 | 3100.00 | 1235.524 | 39.86% |
| Ֆոնդային բյուջեի պահուստային ֆոնդ | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00% |
| Ասֆալտ –բետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում | 13147.598 | 13147.598 | 792.00 | 6.02% |
| Ընդհանուր բնույթի այլ ծառայություն | 780.00 | 480.00 | 145.998 | 30.42% |
| Կանաչ տարածքների հիմնում և պահպանում | 55.00 | 55.00 | 27.00 | 49.09% |
| Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում | 1100.00 | 300.00 | 0.00 | 0.00% |
| Հանրակրթական ուսուցում | 100.00 | 100.00 | 70.00 | 70.00% |
| Բնական գազ և նավթամթերք | 1700.00 | 1700.00 | 50.00 | 2.94% |
| Հանգստի և սպորտի գոտու պահպանում | 100.00 | 100.00 | 0.00 | 0.00% |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 69896.098 | 50104.398 | 16799.510 | 33.53% |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ԵՂԻԳԱՐՈՎԱ